**ОБЩЕРОССИЙСКАЯ ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ**

# «СОЮЗ АРМЯН РОССИИ»

## ПРЕЗИДЕНТ

129272, г. Москва, ул. Советской Армии, д. 8, стр. 1, тел.: (495) 681–15–01; факс: 681-09-64, info@souzarmyan.ru

*Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար*
*պարոն Դավիթ Տոնոյանին*

*Հարգելի պարոն նախարար,*

*Համաշխարհային Հայկական Կոնգրեսի, Ռուսաստանի հայերի Միության և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ և Հայաստանի Հանրապետության բոլոր զինծառայողներին Հայոց Բանակի օրվա կապակցությամբ:*

*Այս հիրավի համազգային տոնի խորհուրդներից մեկն էլ մեր փառապանծ զինված ուժերի և բանակում ծառայող քաջարի հայորդիների հանդեպ ժողովրդի նվիրական սիրո դրսևորումն է, ինչի հիմքում Ազգ-Բանակ անկոտրում միասնությունն է, միասնություն, որը մեր Բանակի անպարտելիության գրավականն է և Հայրենի եզերքում հարատևական խաղաղության հաստատման հուսալի երաշխիքը:*

*Այսօր մենք գլուխ ենք խոնարհում Հայրենիքի պաշտպանության Սուրբ գործին իր կյանքը զոհաբերած Հայ Զինվորի անմար հիշատակի առջև:*

*Այսօր մենք՝ գլուխներս բարձր, ասում ենք յուրաքանչյուր զինծառայողին՝ շարքայինից մինչև գեներալ,- «Հպարտ ենք Քեզնով՝ Հայ Զինվոր»:*

*Արա Աբրահամյան*

*Համաշխարհային Հայկական Կոնգրեսի և*
*Ռուսաստանի հայերի Միության նախագահ*
*ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարի Կամքի Դեսպան*

*28 հունվարի 2019 թ.*